

# asce group

հայկական պողպատածույլական ձեռնարկություն  
армянское сталелитейное предприятие  
armenian steel casting enterprise

„ԱՍԿԵ գրուպ“ ԲԲԸ  
„АСКЕ груп“ ОАО  
„ASCE group“ OJSC

140/04

26 նոյեմբեր 2021թ.

## Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

Ղեկավարվելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ [www.asce.am](http://www.asce.am):

Առդիր՝ 1 թերթ:

Տնօրեն՝



Անտոնյան

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»  
բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)  
տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ)  
ՈՐՈՇՈՒՄ թիվ 13

(Կազմված է « 25 » նոյեմբերի 2021 թ.-ին և բաղկացած է 1 (մեկ) թերթից

խորհրդի նիստի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2  
խորհրդի նիստի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2021 թվականի նոյեմբերի 25  
խորհրդի նիստի սկիզբ՝ ժամը 11:00

խորհրդի նիստին ներկա էին՝

- 1) Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ
- 2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
- 3) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ
- 4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝  
քվորումն ապահովված էր, խորհրդի նիստն իրավասու էր:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

Ընկերության, հետագա օգտագործման համար ոչ պիտանի, սարքավորումների և  
բովախառնուրդային ու կենտրոնական պահեստների որոշ նյութերի դուրս գրման հարցը  
Ձեկուցող՝ Խաչատուր Անտոնյան

Ձեկուցողը ներկայացրեց սարքավորումները, որոնք մաշվել, շարքից դուրս են եկել,  
հետագա օգտագործման պիտանի չեն և առաջարկեց դուրս գրել: Նա ներկայացրեց նաև  
բովախառնուրդային և կենտրոնական պահեստների նյութերի ցուցակը, որոնք  
տեխնոլոգիական պրոցեսի ու օգտագործվող սարքավորումների փոփոխման պատճառով  
օգտագործման համար պիտանի չեն և առաջարկեց դուրս գրել:

Հարցը դրվեց քվեարկության՝

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ	ԿՈՂՍ
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՍ
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՍ
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՍ
Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0	

**ՈՐՈՇՎԵՑ՝**

1. Թույլատրել, ընդունված կարգով, դուրս գրել 546 միավոր 16 990 578.35 դրամ  
հսշվեկշռային արժեքով սարքավորումները, համաձայն ներկայացված ցուցակների:
2. Թույլատրել, ընդունված կարգով, դուրս գրել բովախառնուրդային պահեստի  
40 354 885, 03 դրամ արժողությամբ նյութերը, համաձայն ներկայացված ցուցակների:
3. Թույլատրել, ընդունված կարգով, դուրս գրել կենտրոնական պահեստի  
2 050 048, 64 դրամ արժողությամբ նյութերը, համաձայն ներկայացված ցուցակների:

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ  
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ  
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ  
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

